Հավելված N 11

# Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2015 թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

## *1. Ապարատի պահպանման ծախսեր 6,299,948.0 հազ. ՀՀ դրամ*

### *Աշխատավարձ և նրան հավասարեցված միջոցներ՝ 5,290,713.3 հազ. ՀՀ դրամ*

Աշխատավարձի և նրան հավասարեցված միջոցների հաշվարկը կատարվում է ելնելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի «զ» ենթակետի պահանջներից, համաձայն որի ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին: 2015 թվականի համար առևտրային բանկերը կանխատեսել են **671 հազ. ՀՀ դրամ միջին աշխատավարձ**: ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների միջին աշխատավարձը 2015 թվականի համար պլանավորվել է **532.5 հազ. ՀՀ դրամ**: Նախատեսվել է 3% աշխատավարձի բնականոն աճ՝ պայմանավորված կենտրոնական բանկում գործող վարձատրության կանոններով: 2015թ հաստիքների ավելացում չի նախատեսվել:

### *Կենտրոնական բանկի սոցիալական ապահովության այլ ծախսեր՝ 422,500.0 հազ. ՀՀ դրամ:*

Սոցիալական ապահովության այլ ծախսերի հաշվարկը կատարվել է 2015թ.-ի համար կանխատեսվող ՀՀ ԿԲ հաստիքացուցակի համար: Գումարը նախատեսված է ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների, այդ թվում Դիլիջանում աշխատակիցների սոցիալական փաթեթի ծախսերը հոգալու համար: 2014թ նկատմամբ 6 % աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2015թ նախատեսվել է Դիլիջանի աշխատակիցների ընտանիքի անդամների առողջության ապահովագրություն:

### *Անձնակազմի գործուղում՝ 434,492.2 հազ. ՀՀ դրամ:*

Առաջնորդվելով ՀՀ կենտրոնական բանկի առջև սահմանված խնդիրների իրականացման անհրաժեշտությամբ և Կենտրոնական բանկի խնդիրների

իրականացման գործընթացում յուրաքանչյուր աշխատակցի արդյունավետ գործունեությունն ապահովելու անհրաժեշտությամբ՝ Կենտրոնական բանկը կարևորում է ֆինանսական ոլորտում կրթված մասնագետներ ունենալը, աշխատակիցների շարունակական ուսուցումն ու զարգացումը և մարտահրավերներին դիմակայելու պատրաստվածությունը: 2015թ ընթացքում Կենտրոնական բանկը նախատեսում է կազմակերպել վերապատրաստման ծրագրեր (վերապատրաստման ծրագրերը կազմակերպվում են տարբեր ֆինանսական կազմակերպությունների կողմից և դրանց որոշ մասը ենթադրում է որոշակի մասնակցության վճար), այդ թվում՝ ուսուցողական և փորձի փոխանակման այցեր, ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ արտասահմանում:
Այսպիսով, 2015թ-ին նախատեսվում է կազմակերպել թվով 155 վերապատրաստման ծրագիր (այդ թվում՝ ուսուցողական այցեր, ստանդարտ և նպատակային դասընթացներ), որոնց կմասնակցի մոտ 240 աշխատակից: Վերապատրաստման դասընթացները և փորձի փոխանակման նպատակով կազմակերպվելիք ուսուցողական այցերն ուղղված են լինելու Կենտրոնական բանկի զարգացման ռազմավարական ոլորտներում ԿԲ աշխատակիցների մասնագիտական գիտելիքների խորացմանը և հմտությունների զարգացմանը.

- **Գների կայունության ապահովում**
  գնաճի ռազմավարություն, դրամավարկային քաղաքականություն և վերլուծություն, ֆինանսական շուկաների վերլուծություն, կարճաժամկետ կանխատեսումների նորագույն մեթոդների ուսումնասիրություն, արտաքին խոցելիության գնահատում, DSGE մոդելների կառուցում և գնահատում, իրական հատվածի կառուցվածքային վերլուծություններ, կառուցվածքային մոդելների կառուցում գնահատում և կալիբրացիա, ֆինանսական ծրագրավորում և քաղաքականության իրականացում,
- **Ֆինանսական կայունության** ապահովում Ֆինանսական կայունության, ճգնաժամի կանխատեսում, կանխարգելում և կառավարում, ռիսկերի վրա հիմնված վերահսկողության հիմնարար սկզբունքների և կիրառական հմտությունների յուրացում, ռիսկերի կառավարում, սթրես-թեստավորում բանկերում, արժեթղթերի շուկայի և ներդրումային ֆոնդերի կառավարում, կարգավորում, հաշվետու թողարկողներին առնչվող IOSCO-ի սկզբունքների ներդրում և կիրառում, պարտադիր ապահովագրության առաջնահերթ տեսակների ներդրման փորձի ուսումնասիրություն և վերահսկողություն, վճարահաշվարկային ծառայությունների և համակարգերի կարգավորում, կոնսոլիդացված վերահսկողության ներդրում, ֆինանսական ծառայությունների ոլորտում մրցակցային հարաբերությունների կարգավորում, համակարգային ռիսկի բացահայտում, գնահատում և կարգավորում, մակրոպրուդենցիալ

քաղաքականության գործիքների ուսումնասիրում, ազդեցության գնահատում, ֆինանսական շուկաներ և ֆինանսական նոր գործիքներ, ՖԱԹՖ-ի վերանայված հանձնարարականների իմպլեմենտացում, ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում կիրառվող կանխարգելիչ միջոցներ, սպառողների շահերի պաշտպանության և տարբեր թիրախային խմբերի ֆինանսական կրթման համակարգեր,

- **Ազգային արժույթի շրջանառության ապահովում**
  Վնասված և կասկածելի դրամանիշերի փորձաքննություն, դրամանիշերի նոր պաշտպանական հատկանիշների ուսումնասիրում,

- **Ինստիտուցիոնալ զարգացում**
  Կենտրոնական բանկի գործառույթների իրավական, ֆինանսական, տեղեկատվական սպասարկման բարեփոխումների ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրում և ներդրում, տնտեսության տարբեր հատվածների և գործունեության ոլորտների միջև առկա փոխազդեցությունների բացահայտում, մակրոտնտեսական ընդհանուր վերլուծություն:

Նշված ոլորտներում ԿԲ աշխատակիցների վերապատրաստումների արդյունքում բանկն ակնկալում է դրամավարկային քաղաքականության մոդելների ընդլայնում, գնաճի վարքագիծը բնութագրող կարճաժամկետ մակրոտնտեսական մոդելների կառուցում, զարգացում և գնահատում, ՀՀ ԿԲ եռամսյակային կանխատեսումների մոդելի (QPM) ընդլայնում և բարելավում, ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի համապատասխանեցում միջազգային լավագույն փորձին, ՀՀ ֆինանսական համակարգում ֆինանսական կայունության եւ կայուն աճի ապահովում, ՀՀ-ում կյանքի ապահովագրության ներդրում, ռիսկերի վրա հիմնված վերահսկողական համակարգի աստիճանական ներդրում, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորում, շուկայական վարվելակերպին վերաբերվող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի կատարելագործում, կոնսոլիդացված վերահսկողական մոտեցումների ձևավորում, հանրության կողմից ԿԲ դերի և գործառույթների ընկալում, համապատասխան ակնկալիքների ձևավորում, գործընթացների անընդհատության ապահովման, ԿԲ անձնակազմի արդյունավետ կառավարման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

Բացի այդ, Կենտրոնական բանկն անդամակցելով որոշակի միջազգային կառույցների (Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ կոմիտե, ֆինանսական հետախուզության մարմինների

էգմոնտ խումբ, ԱՄՀ, ՀԲ, Ֆինանսական ներթափանցման ալյանս, սպառողների պաշտպանության ցանց, Միջպետական բանկ) և լինելով ԱՊՀ-ի և ԵԱՏՀ-ի անդամ պետությունների արժութային, ապահովագրության և արժեթղթերի շուկայի կարգավորման պետական մարմինների խորհրդի անդամ, ուղղակի պարտավորություններ ունի ապահովել ներկայացուցչություն վերոնշյալ կազմակերպությունների կողմից կազմակերպվելիք համաժողովներին, տարեկան հանդիպումներին:

Անդրադառնալով գործուղման ծախսերի հաշվարկի մեթոդաբանությանը՝ հարկ է նշել, որ գործուղման ծախսերն իրականացվում են համաձայն ՀՀ ԿԲ-ում գործող կարգի և գործուղման նորմերի: Ինչպես և նախորդ տարի, 2015թ. ևս այս հոդվածում նախատեսված միջոցների պլանավորման հաշվարկի հիմքում ընկած է հետևյալ տրամաբանությունը՝ վերապատրաստման դասընթացների միջին տևողությունը 5 օր է, որի դեպքում աշխատակիցը, գործող կարգի շրջանակներում, մեկնում է դասընթացը սկսելուց մեկ օր առաջ և վերադառնում դասընթացի ավարտին հաջորդող օրը՝ ստանալով համապատասխան օրերի կացության վճարը և ճանապարհածախսը:

Վերոգրյալ և այլ չնախատեսված գործուղումների կազմակերպման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի ծախսերի նախահաշվում արտաքին վերապատրաստումների համար պլանավորվել է **375, 825** հազ. դրամ:

2015թ. ընթացքում ՀՀ տարածքում ուսուցման և վերապատրաստման ծախսերի համար պլանավորվել է **58, 667.2** հազ. դրամ, նախորդ տարվա **59,683.3** հազ. դրամի դիմաց:

1. Կենտրոնական բանկում շարունակում է գործել հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում աշխատակիցների միջազգային մասնագիտական որակավորման հավաստագրերի ստացման և գիտելիքի շարունակական փոխանցման պահանջը, որը ենթադրում է աշխատակիցների կողմից համապատասխան քննությունների հանձնում, իսկ որակավորում ունեցող աշխատակիցների դեպքում՝ դրանք պահպանելու նպատակով մասնակցություն որոշակի վերապատրաստման դասընթացների:
2. Պլանավորված ծախսերի մյուս մասը պայմանավորված է Սյունիքի, Գորիսի ՏԴԿ-ներ ԿԲ աշխատակիցների գործուղումներով, ինչպես նաև Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում միջազգային հեղինակավոր կառույցների հետ համագործակցության շրջանակում իրականացվող տարբեր տարածաշրջանային կոնֆերանսներին և միջազգային սեմինարներին Կենտրոնական բանկի աշխատակիցների մասնակցությամբ: Միտված

Կենտրոնական բանկի, որպես ֆինանսատնտեսական, գիտական և կրթական կարևորագույն ինստիտուտի շարունակական զարգացման խնդրին 2014թ առաջին կիսամյակում Դիլիջանի ՈՒՀԿ-ում արդեն կազմակերպվել է 7 սեմինար-քննարկում, որոնց մասնակցել է Կենտրոնական բանկի 129 աշխատակից: 2015թ ընթացքում նախատեսվում է վերը նշված միջոցառումների քանակի ավելացում:

2 Կարևորելով երիտասարդ մասնագետների զարգացումը, ինչպես նաև աշխատանքային խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար պահանջվող հիմնարար հմտությունների, օտար լեզուների իմացության կատարելագործման անհրաժեշտությունը՝ կենտրոնական բանկը որոշակի ծախսեր է պլանավորել նաև այս նպատակով՝ ՀՀ տարածքում առկա ուսումնական հաստատություններում և տեղի մասնագետների ներգրավմամբ ուսուցման և վերապատրաստման ծրագրերին ԿԲ աշխատակիցների մասնակցությունն ապահովելու նկատառումով:

Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ նկատմամբ չի փոփոխվել:

***Ներկայացուցչական ծախսեր՝ 54,218.3 հազ. ՀՀ դրամ***

2015 թ.-ին նախատեսվում են մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելություններ, օտարերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների այցեր՝ համատեղ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ քննարկումների և բանակցությունների նպատակով:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ նկատմամբ չի փոփոխվել:*

***Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում՝ 98,024.2 հազ. ՀՀ դրամ***

2015թ ՀՀ ԿԲ-ում շահագործվելու է 30 ավտոմեքենա (2014թ 29 ավտոմեքենա): Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերի հաշվարկները կատարվել են հիմք ընդունելով շուկայում գործող գները, և 2014թ. ՀՀ ԿԲ կողմից վառելիքի ձեռքբերման և ավտոմեքենաների տեխսպասարկման պայմանագրերը:

- **Ծառայողական փոխադրամիջոցների սպասարկում.**

Հաշվի առնելով 2013թ. և 2014թ. I կիսամյակում ավտոմեքենաների սպասարկման վրա կատարված ծախսերը, 2015թ ծառայողական փոխադրամիջոցների սպասարկման համար նախատեսվող գումարը մեկ ավտոմեքենայի համար իջեցվել է 3.000 դրամով և նախատեսվել է ամսական 74,000 ՀՀ դրամ, որի տարեկան ամբողջական գումարը կկազմի ***26,640.0 հազ. դրամ***

*30 ավտոմեքենա x 74,*000 *հազ x12 ամիս =26,640,000*

- **Վառելանյութ.**

Հիմք ընդունելով վառելիքի ընթացիկ գները և շուկայում կատարվելիք գների տատանումները 2015թ վառելանյութի՝ բենզինի, 1 լիտրի համար կանխատեսվող գինը սահմանվում է **500.0** ՀՀ դրամ՝ նախորդ տարվա՝ ***520.0*** ՀՀ դրամի փոխարեն, իսկ դիզ. վառելիքի 1 լիտրի գինը՝ **480.0** ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ մնում է անփոփոխ:

ՀՀ ԿԲ 2015թ. շահագործելու է թվով 30 ավտոմեքենաներ, որոնցից *բենզինով*՝ 23-ը:

ՀՀ կենտրոնական բանկի ներքին կարգերի համաձայն ՀՀ կենտրոնական բանկում տարեկան ծախսվում է մոտ **94,000լ** *բենզին*, որի գինը **500** դրամով հաշվելու դեպքում կենտրոնական բանկի բենզինի տարեկան ծախսը կկազմի ***47,000,000 ՀՀ դրամ:***

*Դիզելային վառելիքի* ՀՀ կենտրոնական բանկի ներքին կարգերի համաձայն տարեկան ծախսվում է մոտ 42,040լ դիզ. վառելիք, որի գինը 480 դրամով հաշվելու դեպքում կենտրոնական բանկի դիզ. վառելիքի տարեկան ծախսը կկազմի՝ ***20,179,200 ՀՀ դրամ:***

*Քսայուղեր* ձեռք բերելու համար 2015թ. նախատեսվում է ***2,205,000 ՀՀ դրամ***:

- **Այլ տրանսպորտային ծախսեր *2,000,000 ՀՀ դրամ***

Այս գումարը նախատեսվում է տեխնիկական զննման, ՊետԱվտոՏեսչության և այլ հնարավոր ծախսերի իրականացման նպատակով:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ նկատմամբ նվազել է 2 % ով:*

## *2. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր՝ 61,754.7 հազ. ՀՀ դրամ*

Հաշվի առնելով **տեղական մամուլում** հայտարարությունների ծավալը և հաճախականության աճի հնարավորությունը, հայտարարությունների հրապարակման համար նախատեսվում է **7,000.0 հազ դրամ:**

ԿԲ հաշվեկշիռները, արտաքին պահուստների մասին տեղեկատվությունը, թափուր աշխատատեղերի և ձեռքբերման մրցույթների մասին հայտարարությունները տպագրվելու են «Ազգ», «Հայաստանի Հանրապետություն», «Հայոց Աշխարհ», «Առավոտ», «Գոլոս Արմենիի» թերթերում:

- Նախկին փորձը ցույց է տալիս, որ ամենաշատ քանակությամբ հայտարարությունները տպագրվել են 2012 թ-ին՝ 216 հատ, որի ընդհանուր արժեքը կազմել է 5,830,000 դրամ:

  2015 թ. համար նախատեսվում է, որ հայտարարությունների քանակը որոշակի կավելանա: Հնարավոր է, որ աճի մեկ հայտարարության միջին գինը, սակայն ներկա դրությամբ կազմում է մոտ 25,000 դրամ: Ըստ այդմ, 2015 թ-ի հայտարարությունների տպագրման համար նախատեսվում է ***6,500 հազ.դրամ*** հետևյալ հաշվարկով. 25,000X260=6,500,000 դրամ:

- Այս հոդվածում ներառված են նաև Banks.am և CareerCenter.am ինտերնետային կայքերում հայտարարությունների տեղադրման ծախսերը (համապատասխանաբար 84000 դրամ մեկ տարվա համար անսահմանափակ քանակությամբ հայտարարությունների տեղադրման համար և 358.000 դրամ (գումարը նախատեսված է տարեկան 20 հատ հայտարարությունների համար): Այս ծախսերը կազմում են մոտ ***500,0 հ****ազ դրամ*:

Նախատեսված գումարը 2014թ նկատմամբ չի փոփոխվել:

ՀՀ Կենտրոնական բանկի և Հայաստանի բանկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության ***արտասահմանյան հրապարակություններում*** տեղադրելու նպատակով, նախատեսվում է **500.0 հազ ՀՀ դրամ:**

*Նախատեսված գումարը 2014թ նկատմամբ չի փոփոխվել:*

***Գրականության ձեռքբերման*** համար պլանավորվել է **10,554.7 հազ ՀՀ դրամ**

*Գրականության ձեռքբերման հետ կապված գումարը 2014թ նկատմամբ աճել է 11% ով:*

***Ամսագրերի և թերթերի բաժանորդագրության*** համար պլանավորվել է **10,000.0 հազ ՀՀ դրամ:** Գումարը նախատեսվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական, ներքաղաքական, ինչպես նաև միջազգային նորություններին իրազեկ լինելու նպատակով անհրաժեշտ, Հայաստանում լույս տեսնող՝ տնտեսական և տարբեր քաղաքական ուղղվածություն ունեցող, մի շարք թերթերի, ինչպես նաև ֆինանսաբանկային տեղեկատվություն պարունակող ռուսական և արտասահմանյան թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար: 2015 թ-ին շարունակվելու են մի

շարք արտասահմանյան մասնագիտական ամսագրերի բաժանորդագրությունները, ինչպես նաև բաժանորդագրվելու ենք մի քանի նոր ամսագրերի:

Նախատեսված գումարը 2014թ նկատմամբ չի փոփոխվել:

***Լրատվական գործակալությունների նյութերի ձեռք բերման*** համար պլանավորվել է **6,500.0 հազ** ՀՀ դրամ: Ծախսերը պլանավորվել են հաշվի առնելով կենտրոնական բանկի կողմից 2015թ ձեռքբերման ենթակա լրատվական գործակալությունների նյութերի ցանկը՝ ըստ 2014 թ. գործող պայմանագրային գների, որի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 5,900 հազ դրամ, ինչպես նաև լրատվական գործակալությունների ծառայությունների գների մոտ 10% հավանական թանկացման հնարավորությունը:

*Նախատեսված գումարը 2014թ նկատմամբ չի փոփոխվել:*

***Ֆիլմի և տեսահոլովակի նկարահանման ծախսերը*** պլանավորվել են տարբեր բացատրական և գովազդային տեսահոլովակների նկարահանման և հեռարձակման համար, որոնց ծախսերը կկազմեն **20,000.0 հազ**. դրամ՝ որից 6 մլն դրամ նախատեսվում է ռադիոգովազդների և հեռուստագովազդների պատրաստման, և 14 մլն դրամ՝ ռադիոգովազդների և հեռուստագովազդների հեռարձակման համար: Նախատեսվում են բացատրական տեսանյութերի պատրաստում ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի պաշտպանության, անկանխիկ վճարումների զարգացման խթանման, կենսաթոշակային բարեփոխումների և այլ թեմաներով:

*Նախատեսված գումարը 2014թ նկատմամբ չի փոփոխվել:*

***Հասարակայնության հետ կապերի գծով*** ծախսերը պլանավորվել են **7,200.0 հազ ՀՀ դրամ**: Գումարը նախատեսվել է ԿԲ գործառույթները ներկայացնող ցուցահանդեսների կազմակերպման, Հայաստանի և Արցախի բարձրագույն կրթական հաստատությունների տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների՝ Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակների տրամադրման, կրթական տիպի ֆինանսական ծառայություններ սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ միջոցառումների ու մարզերից Կենտրոնական բանկ դպրոցականների այցելությունների կազմակերպման նպատակով: Այս հոդվածով պլանավորվում է նաև գումար տնտեսագիտություն դասավանդող հանրակրթական ավագ և միջին դպրոցների ուսուցիչների համար Կենտրոնական բանկի գործառույթների, մակրո և միկրո տնտեսագիտության, Հայաստանի տնտեսության վերաբերյալ դասընթացների անցկացման կրթական ծրագիրը շարունակելու համար (երկշաբաթյա դասընթացներ Այցելուների կենտրոնում):

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ նկատմամբ նվազել է մոտ 15% :*

## *3 Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր՝ 114,995.6 հազ. ՀՀ դրամ*

2015թ.-ին կենտրոնական բանկի ծառայողների համար աշխատանքի նորմալ պայմաններ ապահովելու նպատակով արագամաշ առարկաների՝ պաշարների, դուրսգրման հետ կապված ծախսերը կկազմեն 114,995.6 հազ. դրամ: Տնտեսական ծախսերը հիմնականում ներառում են կենտրոնական բանկի շենքի սպասարկման հետ կապված անհրաժեշտ ծախսերը: Պլանավորումը կատարվել է հիմք ընդունելով 2013 թվականի ու 2014թ. առաջին կիսամյակի օգտագործված տնտեսական նյութերի քանակներն ու 2015 թվականին դրանց սպասվելիք գները:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ նկատմամբ նվազել է 207 հազ դրամով:*

## *4. Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր՝ 44,831.4 հազ. ՀՀ դրամ*

Կենտրոնական բանկի հեռախոսային և ֆաքսիմիլային կապի անխափան աշխատանքն իրականացնում են «Արմենթել» ՀՁՓԲԸ (Երևանի քաղաքային հեռախոսակապի ծառայություն, բջջային հեռախոսակապի ծառայություն (Բիլայն և Վիվասել՝ Ղ. Տելեկոմ ՓԲԸ՝ Arminco), Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերի տարածքային հեռախոսային կապի ծառայություն), Ucom, որոնց հետ կնքված են համապատասխան պայմանագրեր և մատուցվող ծառայությունները որոշվում են ըստ սահմանված գնացուցակների: Հաշվարկներում ներառվել են աբոնենտային վարձը, խոսակցությունների վճարները, նոր հեռախոսահամարների միացումը, սակագների հնարավոր փոփոխությունը, ռոպեավարձի կիրառումը:

- Քաղաքային հեռախոսակապ **31,263,400 ՀՀ դրամ**

6,192,000+5,827,200 +10,772 ,200+432,000 +8,040,000

Կենտրոնական բանկում առկա է **112** քաղաքային հեռախոսագիծ

ա) Բաժանորդային վճար՝ ***6,192,000*** *ՀՀ* դրամ

*Արմենթել՝ 68  հ/գիծ. x 5.000 դր. x 12 ամիս =* ***4,080,000*** *ՀՀ դրամ*

*Ucom՝ 44 հ/գիծ. x 4.000 դր. x 12 ամիս =* ***2,112,000*** *ՀՀ դրամ*

բ) Միջքաղաքային խոսակցությունների վճար՝ ***5,827,200*** *ՀՀ* դրամ

2014թ. արդյունքներից ելնելով, ամիսը 3.000-5.200 դր. 1 հեռ. միջին վճարը

*68 հեռ. x 5.200 դր. x 12 ամիս =* ***4,243,200 ՀՀ դրամ***

*44 հեռ.x 3.000 դր. x 12 ամիս =**1,584,000 ՀՀ դրամ***

գ) Ներքաղաքային խոսակցություններ՝ ***10,772,200*** ՀՀ դրամ

**Հաշվի առնելով րոպեավճարի կիրառումը՝**
օրական միջինը 1 հեռ.՝ 68 րոպե

*68 հեռ. x 5 դր x 307 օր x 68 րոպե ~**7,098,000** ՀՀ դրամ*
*44 հեռ. x 4 դր x 307 օր x 68 րոպե ~ **3,674,200** ՀՀ դրամ*

դ) Ուղիղ կապ՝***432,000*** ՀՀ դրամ
Կենտրոնական բանկում ուղիղ կապով շահագործվում է 9 հեռախոսակապ

*9հեռ. X4,000 դրամ x 12 ամիս =* ***432,000*** *ՀՀ դրամ:*

ե) E1 հոսք՝ ***8,040,000*** ՀՀ դրամ

*670,000դր x 12 ամիս* **= 8,040,000** ՀՀ դրամ

- «Վան» հանգստյան տուն՝ ***360,000*** ՀՀ դրամ

ա) աբոնենտային վճար

2 հեռ. x 5.000 դրամ x 12ամիս = 120,000 ՀՀ դրամ

բ) միջքաղաքային խոսակցությունների վճար

1 հեռ. x 20.000 դրամ x 12 ամիս = 240,000 ՀՀ դրամ

- ՀՀ կառավարության առընթեր ԱԱ ծառայություն ROSSA **800,000** ՀՀ դրամ

2015 թ. կենտրոնական բանկում գործելու է 2 կառավարական հեռախոսակապ՝

2 x 33.333դր. x 12 ամիս ~ 800,000 ՀՀ դրամ

- Բջջային հեռախոսակապ **6,468,000** ՀՀ դրամ

1 x 80.000 դր. x 12 ամիս = 960,000 ՀՀ դրամ
1 x 40.000 դր. x 12 ամիս = 480,000 ՀՀ դրամ
1 x 20.000 դր. x 12 ամիս = 240,000 ՀՀ դրամ
4 x 20.000 դր. x 12 ամիս = 960,000 ՀՀ դրամ
22 x 14.500 դր. x 12 ամիս = 3,828,000 ՀՀ դրամ

- Գորիս՝ **396,000** ՀՀ դրամ

1 հեռ. x 10.000 դրամ(միջքաղաքային և խոսելավարձ) x 12 ամիս = 120,000 ՀՀ դրամ
3 հեռ. x 5.000 դրամ (բաժանորդային վարձ) x 12 ամիս = 180,000 ՀՀ դրամ
2 հեռ. x 4.000 դրամ (ուղիղ գծի բաժանորդային վարձ) x 12 ամիս = 96,000 ՀՀ դրամ

- Տարածաշրջանային բաժանմունք՝ **960,000 ՀՀ դրամ**

ա) բաժանորդային վճար 10 x 5.000 բաժանորդային վարձ x 12 = 600.000 ՀՀ դրամ
բ) միջքաղաքային վճար 10 x 3.000 x 12= 360.000 ՀՀ դրամ

- Սյունիքի ՏԴԿ՝ **864,000** ՀՀ դրամ

ա) բաժանորդային վճար

6 x 5.000 բաժանորդային վարձ x 12 ամիս = 360,000 ՀՀ դրամ

բ) միջքաղաքային

6 x 7000 դր x 12 ամիս = 504,000 ՀՀ դրամ

- Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն **3,720,000 ՀՀ դրամ**

*(960,000+960,000+1,800,000)*

ա) Բաժանորդային վճար՝

*16 h/գրծ. x 5.000 դր. x 12 ամիս = 960,000 ՀՀ դրամ*

բ) Միջքաղաքային խոսակցությունների վճար՝

2014թ. արդյունքներից ելնելով, ամիսը 8,000 դր. 1 հեռ. միջին վճարը

*10 հեռ. x 8.000 դր. x 12 ամիս = 960,000 ՀՀ դրամ*

գ) E1 հոսք՝

*150.000 դր x 12 ամիս* **=** *1,800,000 ՀՀ* դրամ

*Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը 2014թ նկատմամբ նվազել են 10% ով:*

## *5. Չնախատեսված ծախսեր՝ 20,000.0 հազ. ՀՀ դրամ*

«ՀՀ կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ծախսերում ներառված է «Չնախատեսված ծախսեր (ծախսերի պահուստ) հոդվածը: Այս ծախսային հոդվածը նախատեսված է ՀՀ օրենքների և գործող տարբեր բնույթի

սակագների փոփոխությամբ առաջացած ենթածախսերի փակման համար, ինչպես նաև այլ չնախատեսված վարչական ծախսերի կատարման համար:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ նկատմամբ չի փոփոխվել:*

***Ընդամենը վարչական ծախսեր՝ 6,541,529.7 հազ. ՀՀ դրամ***

## ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

### *1. Աշխատանքային շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում՝ 2,325,000.0 հազ ՀՀ դրամ*

2015թ շարունակվելու են «Դիլիջանի կրթահամալիրի» և «Դիլիջան» հանգստյան տան» կառուցման աշխատանքները: Այս հոդվածով պլանավորված գումարը նախատեսվում է օգտագործել «Դիլիջանի կրթահամալիրի» շինարարության աշխատանքների ավարտման և տարածքի բարեկարգման, «Դիլիջան» հանգստյան տան» կառուցման, այդ թվում նաև հակասողանքային ջրահեռացման աշխատանքների իրականացման, ճանապարհի և հենապատի կառուցման, ջրամատակարարման համակարգերի ու կաթսայատան շինմոնտաժային աշխատանքների համար: 2015թ գումար է նախատեսված նաև Սիսիանի ՏԴԿ-ի կառուցման աշխատանքների համար:

Աշխատանքային շենքերի և շինությունների կառուցման և կապիտալ վերանորոգման հետ կապված ներդրումները իրականացվում են փորձագիտական դրական եզրակացություն ունեցող նախագծահաշվային փաստաթղթերի հիման վրա, որոնց հիման վրա էլ ստացվում են շինարարական թույլտվություններ:

Կապիտալ ներդրումները ենթարկվում են նաև Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական ստուգման:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ նկատմամբ նվազել է 23 % ով:*

## *2. Համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերում և կապիտալ վերանորոգում՝ 1,616,882.0* **հազ.** *ՀՀ դրամ*

### *Համակարգչային տեխնիկա՝ 1,473,231.0 հազ. ՀՀ դրամ:*

Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման ծրագիրը ընդգրկում է համակարգիչների, հարակից սարքավորումների, ծրագրային ապահովման, կապի սարքավորումների ձեռքբերում 2015 թվականի ընթացքում և հիմնված է սկզբունքների վրա, որոնք սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականությամբ, տեղեկատվական անվտանգության քաղաքականությամբ և հավանության է արժանացել ՀՀ կենտրոնական բանկի Խորհրդի կողմից, բխում են միջազգային փորձից և բանկային համակարգի զարգացման միտումներից:

ա) ՀՀ կենտրոնական բանկի բոլոր ֆունկցիոնալ աշխատակիցները պետք է ունենան իրենց համակարգիչները: Այս խնդիրը ՀՀ ԿԲ-ում գործնականորեն լուծված է: Աշխատակայանների քանակի ավելացումը կարող է կատարվել կառուցվածքային փոփոխությունների հետևանքով, եթե ավելանա աշխատակիցների քանակը, կամ եթե որոշակի կիրառական ֆունկցիաների իրականացման համար պահանջվեն լրացուցիչ համակարգիչներ, որոնք կկատարեն հատուկ ֆունկցիոնալ խնդիրներ: Ընդ որում, օգտագործվող համակարգիչները՝ ինչպես սերվերները, այնպես էլ աշխատանքային կայանները, ըստ անհրաժեշտության պետք է թարմացվեն: Համակարգիչների բարոյական և ֆիզիկական հնացումը (մաշվածքը) տեղի է ունենում 3-5 տարիների ընթացքում կախված օգտագործման ոլորտից. այդ պատճառով ՀՀ ԿԲ համակարգիչները, որպես կանոն, փոխարինվում են 5 տարին մեկ՝ հին համակարգիչները օտարվում են և դրանց փոխարեն ձեռք են բերվում նորերը:

բ) ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացված բանկային համակարգերի անխափան, հուսալի և անվտանգ աշխատանքը ապահովելու համար բոլոր համակարգիչները պետք է ապահովված լինեն անխափան էլեկտրասնուցման սարքերով: ՀՀ կենտրոնական բանկի համակարգիչները գործնականորեն համալրված են անխափան սնուցման սարքերով և այդ պատճառով նորերի ձեռք բերումը պայմանավորվում է հիմնականում նոր սերվերների և աշխատակայանների ձեռք բերումով կամ ֆիզիկապես և բարոյապես մաշվածների փոխարինմամբ:

գ) ՀՀ կենտրոնական բանկում տպող սարքերը պետք է օգտագործվեն օպտիմալ ձևով, այսինքն՝ մինիմալ քանակությամբ ապահովեն մաքսիմալ արտադրողականություն և բարձր որակ: Դա ապահովվում է ցանցային լազերային տպող սարքերի օգտագործմամբ: Նախորդ տարիներին տվյալ սկզբունքի կիրառումը բերեց տպող սարքերի ընդհանուր քանակի էական նվազման: Բացառություն են կազմում փոքր չափի հատուկ բանկային ասեղային կամ լազերային տպող սարքերը, որոնց միջոցով ֆինանսական գործառնություններ իրականացնող աշխատակիցները տպում են հատուկ ձևաչափի բազմաշերտ ֆինանսական բլանկներ կամ սահմանված ձևաչափի այլ բլանկներ:

դ) ՀՀ կենտրոնական բանկում օգտագործվող ստանդարտ ծրագրային համակարգերը և փաթեթները պետք է անընդհատ թարմացվեն նոր տարբերակներով՝ աշխարհում կիրառվող նոր տեղեկատվական տեխնոլոգիաներին համապատասխան: Հակառակ դեպքում ՀՀ ԿԲ-ը շատ արագ հետ կմնա տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումներից և հնարավոր չի լինի ներդնել և շահագործել նոր կիրառական ծրագրային համակարգեր, որոնք իրականացնում են ժամանակակից ֆինանսական և բանկային տեխնոլոգիաներ, ինչպես նաև արդյունավետ մշակել և պահպանել անընդհատ աճող ֆինանսական և տնտեսական տեղեկատվության ծավալները:

ե) ՀՀ կենտրոնական բանկի լոկալ համակարգչային ցանցը, միջբանկային համակարգչային ցանցը, էլեկտրոնային կապի և վճարումների այլ համակարգերը անընդհատ պետք է զարգանան հուսալիության և անվտանգության բարձրացման, արտադրողականության ավելացման, ժամանակակից տեխնիկական և ծրագրային միջոցների կիրառման ուղղություններով:

զ) ՀՀ կենտրոնական բանկում նոր կիրառական և ինֆրակառուցվածքի կառավարման ծրագրային նոր համակարգերի մշակման և թեստավորման գործընթացները պետք է ամբողջովին տարանջատված լինեն իրական համակարգերի շահագործման գործընթացներից: Այդ իրականացնելու համար ԿԲ-ում ստեղծված է ու ըստ պահանջարկի պետք է զարգացվի տրամաբանորեն առանձին թեստային լոկալ ցանց իր համակարգիչներով և սերվերներով, որոնք օգտագործվում են ծրագրավորողների և թեստավորողների կողմից նոր համակարգերի թեստավորման և մշակման աշխատանքներ կատարելու ժամանակ: Սա համապատասխանում է միջազգային ստանդարտներին և լավագույն փորձին:

է) ՀՀ կենտրոնական բանկում հիմնականում կիրառվում են սերվերներ, որոնք ընդգրկված են Բլեյդ սերվերային համալիրներում, ու տվյալների պահպանման ինքնուրույն համակարգեր, որոնք միավորվում են կապի հատուկ ենթակառուցվածքով Բլեյդ համալիրների հետ ու տրամադրում են սերվերներին արտաքին հիշողության մեծ

տիրույթներ: Ինչպես սերվերների, այնպես էլ արտաքին հիշողության համար կիրառվում է վիրտուալացում: Այս մոտեցումները թույլ են տալիս արդյունավետ օգտագործել ֆիզիկական սերվերների ու հիշողության սարքերի ռեսուրսները, ապահովել նրանց աշխատանքի բարձր հուսալիություն ու անընդհատություն:

ը) Կենտրոնական բանկում ինտերնետային ցանցը և լոկալ ցանցը միավորվում են մեկ միացյալ ցանցի կազմում: Միացյալ ցանցում կիրառվում են համապատասխան պաշտպանական ծրագրա-ապարատային միջոցներ, տեխնոլոգիական լուծումներ, ցանցային պաշտպանական համակարգեր և արձանագրություններ, կազմակերպչական միջոցառումներ, որոնք ապահովում են տեղեկատվական և հաշվողական ռեսուրսների պաշտպանությունը անթույլատրելի տիրապետումից, փոփոխումից և ոչնչացումից: Միացյալ ցանցը բաժանված է տարբեր պաշտպանական գոտիների: Ցանցի ինչպես օգտագործողները, այնպես էլ սերվերները և տեղեկատվական ռեսուրսները տրամաբանորեն բաժանված են տարբեր խմբերի՝ կախված նրանց գաղտնիության և աշխատանքի անընդհատության ապահովման կարևորությունից: Տարբեր խմբերը միավորվում են տարբեր վիրտուալ ցանցերում և կարող են փոխգործակցել միմյանց հետ միայն հատուկ պաշտպանական ապարատածրագրային համակարգերի միջնորդությամբ ըստ սահմանված կանոնների: Նշված չափանիշներից ելնելով որոշ աշխատակայաններ կարող են օգտագործվել միայն ներքին կրիտիկական կիրառական համակարգերից օգտվելու համար, որոշ աշխատակայաններ՝ և ներքին ոչ կրիտիկական կիրառական համակարգերից օգտվելու համար և ինտերնետից օգտվելու համար, իսկ որոշները՝ միայն ինտերնետից օգտվելու համար: Բացի այդ ինտերնետից օգտվող համակարգիչներից աշխատակիցները օգտվում են նաև արտաքին էլեկտրոնային փոստի ծառայություններից: Կրիտիկական սերվերները և տեղեկատվական ռեսուրսները պաշտպանվում են ոչ միայն արտաքին անթույլատրելի օգտագործումներից, այլ նաև ներքին օգտագործողների անթույլատրելի օգտագործումներից:

Համաձայն տվյալ սկզբունքների, ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացման ռազմավարության ու տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականության, ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացման ներկա վիճակի և զարգացման պլանների, կազմված է 2015 թվականի համակարգչային տեխնիկայի և ծրագրային համակարգերի ձեռքբերման ծրագիրը: 2015 թվականի կապիտալ ներդրումների ծրագիրը ընդգրկում է համակարգչային տեխնիկայի ու ծրագրային ապահովման ձեռք բերումներ ԿԲ-ի Երևանի մասնաշենքի ու Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար:

ՀՀ կենտրոնական բանկում, որպես կանոն, ձեռք է բերվում բարձրորակ այսպես կոչված "Brand Name" կարգի համակարգչային տեխնիկա միայն մրցութային հիմունքներով:

Համակարգչային տեխնիկան, որպես կանոն DELL, Hewlett Packard, IBM,Cisco Systems, Juniper, Huawei-3Com և այլ հանրահայտ ընկերությունների արտադրանք է: Փորձը ցույց է տալիս, որ նշված տեսակի տեխնիկան ունի բարձր որակ, լավ և երկարաժամկետ (3 տարի) երաշխիքային սպասարկում, բարձր հուսալիություն և տեխնիկական զարգացման լայն հնարավորություններ: Հաշվի առնելով բանկային ավտոմատացված համակարգերին ներկայացվող տեխնիկական ռիսկերի նվազեցման, հուսալիության, անխափան աշխատանքի և անվտանգության բարձր պահանջները, նման բարձրորակ տեխնիկայի օգտագործումը ՀՀ կենտրոնական բանկում անհրաժեշտություն է: Կապիտալ ներդրումների հաշվարկը հիմնված է նշված համակարգչային տեխնիկայի ստանդարտ գների վրա, որոնք մոտավորապես 25% ավելի թանկ են ոչ "Brand Name" համակարգչային տեխնիկայից: Ձեռքբերման մրցութային եղանակը թույլ է տալիս ձեռք բերել տեխնիկան հայկական շուկայում առկա մինիմալ գներով: Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վարչության կապիտալ ներդրումների ծրագրով 2015թ. նախատեսվում են ներքոնշված ձեռքբերումները: Ստորև բերվող ծախսերում հաշվի է առնված այն հանգամանքը, որ ԿԲ-ը 2005 թվականից վճարում է ավելացված արժեքի հարկ, հետևաբար բոլոր ծախսերի հաշվարկում ներառված է 20% ԱԱՀ:

*Ընդհանուր համակարգչային տեխնիկայի գծով ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 36 %ով*

- **Համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների գծով կապիտալ ներդրումները պլանավորվել են՝ 166,815.0 հազ դրամ,**

**Համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների մեջ են մտնում՝**

**1. Համակարգիչներ՝ 93,280.0 հազ դրամ:**

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում ֆունկցիոնալ նշանակությամբ օգտագործելու, նոր աշխատատեղերին տրամադրելու և ԿԲ համակարգիչների պահուստային ֆոնդը համալրելու համար 2015թ. նախատեսվում է ձեռք բերել 26 նոր համակարգիչ, ինչպես նաև փոխարինել 150 համակարգիչ, որոնք շահագործվում են հինգ տարուց ավել:

**2. 500 VA անխափան սնուցման սարք՝ 900.0 հազ դրամ:**

2015թ. կենտրոնական բանկի աշխատատեղերում օգտագործվող համակարգիչների անխափան սնուցման հնացած սարքերը փոխարինելու և նոր, այդ թվում Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի աշխատակայանները անխափան սնուցման սարքերով ապահովելու համար նախատեսվում է ձեռք բերել 20 անխափան սնուցման սարք:

**3. Հզոր անխափան սնուցման սարքեր՝ 20,000.0 հազ դրամ:**

Դիլիջանի ԱՅԲ դպրոցում 2014 թվականին տեղադրվելու ու գործարկվելու է անխափան սնուցման սարք 30KVA հզորությամբ, որը ապահովելու է դպրոցի բոլոր համակարգիչների, սերվերների ու ցանցային ենթակառուցվածքի անխափան էլեկտրասնուցումը: 2015թ. նախատեսվում է տեղադրել նույնատիպ պահուստային սարքավորում:

**4. Notebook տիպի համակարգիչները՝ 5,040.0 հազ դրամ:**

Կենտրոնական բանկի ստորաբաժանումներում և պահուստային բանկում հինգ տարուց ավել շահագործվող համակարգիչները փոխարինելու և Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնին տրամադրելու նպատակով նախատեսվել է ձեռք բերել 7 Notebook տիպի համակարգիչ

**5. Այլ համակարգչային սարքավորումներ՝ 40,570.0 հազ դրամ**:

2015թ. նախատեսվում է ներդնել Երևանի հիմնական մասնաշենքում ու Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում 50 տերմինալով համալրված տերմինալային սերվեր: Այդ նպատակով պլանավորվում է ձեռք բերել 50 հատ տերմինալ և համապատասխան ծրագրային ապահովում, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 50*290,000 դրամ=14,500,000 դրամ: Նախատեսվում է ձեռք բերել՝ 6 հատ դարակային պահարաններ կոմուտացիոն պանելների ու ցանցային սարքավորումների տեղակայման համար, ծախսերը կկազմեն 6*2,000,000 դրամ=12,000,000 դրամ, տեղեկատվության պահպանման հատուկ համակարգ NAS 10,320,000 դրամ ընդհանուր արժեքով, արտապատկերող սարքեր (Projector) 2500 Lumen 5 հատ, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 5*750.000 դրամ = 3,750,000 դրամ:

**6. Արագագործ լազերային տպող սարքավորում՝ 4,925.0 հազ ՀՀ դրամ**

2015 թվականին ՀՀ կենտրոնական բանկի ստորաբաժանումներում հին բարոյապես ու ֆիզիկապես մաշված տպող սարքերը փոխարինելու և ՀՀ կենտրոնական բանկի պահուստային բանկում ԿԲ-ի գործունեության անընդհատության ապահովման համար նախատեսվում է ձեռք բերել *8 հատ արագագործ լազերային տպող* սարք և *1 հատ փոքր լազերային տպող* սարք:

**7. Փաստաթղթերի մշակման սարքավորումներ՝ 2,000.0 հազ ՀՀ դրամ**

2015 թվականին ՀՀ կենտրոնական բանկի համար նախատեսվում է ձեռք բերել 1 հատ փաստաթղթերի մշակման սարքավորում, որը կփոխարինի հին բարոյապես ու ֆիզիկապես մաշված շահագործվող փաստաթղթերի մշակման սարքավորումը:

**9 Սկաներ՝ 100.0 հազ դրամ:**

2015 թվականին ՀՀ կենտրոնական բանկի ստորաբաժանումների համար ձեռք է բերվելու 2 հատ սկաներ:

- **Ցանցային սարքավորումների գծով կապիտալ ներդրումները պլանավորվել են՝ 27,260.0 հազ ՀՀ դրամ:**

**1. Լոկալ ցանցի կոմունիկացիոն սարքավորումներ՝ 23,760.0 հազ դրամ**

2010 թվականից ԿԲ-ում շահագործվում է միացյալ լոկալ ցանց, որում միավորված են լոկալ համակարգչային ցանցը և ինտերնետային ցանցը՝ ապահովելով անվտանգության և պաշտպանվածության պահանջվող մակարդակ: 2015 թվականին ԿԲ լոկալ ցանցի աշխատանքի անընդհատության ապահովման և զարգացման նպատակով պլանավորվել է **23,760.0** դրամ: Հաշվարկները կատարվել են հիմք ընդունելով 2012 թվականին համապատասխան սարքերի ձեռք բերման մրցութային գները:

**2. Internet ցանցի կոմունիկացիոն սարքավորումներ՝ 3,500 հազ. ՀՀ դրամ**

2015 թվականին նախատեսվում է ձեռք բերել՝ 1 հատ հրապատ պաշտպանիչ համակարգ Cisco ASA 5500 սերիայի:

- **Տեղեկատվական անվտանգության ծրագրա-ապարատային համակարգեր՝ 79,600.0 հազ ՀՀ դրամ:**

1. Համակարգչային ցանց մուտքի քարտային համակարգ՝ ինտեգրված մուտքի/ելքի համակարգի հետ: Հնարավորություն կտա օգտագործողներին մուտք գործել ցանց և կիրառական համակարգեր՝ օգտագործելով իրենց մուտքի քարտերը: Մեկ կայանի վրա ընկնող ծախսը միջին հաշվարկով կկազմի 63,000 ՀՀ դրամ, ընդհանուր ծախսը՝ **37,800,000** դրամ:
2. Անվտանգ ցանցային միացման սերվեր՝ VPN սերվեր՝ հեռավոր աշխատանքի համար, ինտերնետից ԿԲ ռեսուրսներին միացման անվտանգությունը ապահովելու համար՝ **13,000,000** դրամ:
3. Ցանց ներխուժման հայտնաբերման/կանխարգելման համակարգ՝ 2 հատ Դիլիջանի ենթակառուցվածքի և 1 հատ պահուստային բանկի համար՝ **28,800,000 դրամ:**

- **Տեխնիկական անվտանգության ծրագրա-ապարատային համակարգեր՝ 74,300.0 հազ ՀՀ դրամ:**

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014 թվականից Microsoft ընկերությունը դադարեցրել է WindowsXP օպերացիոն համակարգի ուղեկցումը, ԿԲ

անվտանգության ինտեգրացված WIN-PAKPRO 2005, ինչպես նաև թվային տեսադիտարկման և տեսագրման համակարգի աշխատունակության անընդհատությունը և հետագա շահագործումը ապահովելու համար անհրաժեշտ է 2003թ. ներդրված WindowsXP օպերացիոն համակարգով աշխատող ԿԲ և ՏԴԿ-ների թվային տեսադիտարկման INTELLECT համակարգի անցում WINDOWS 7 օպերացիոն համակարգի և նոր ծրագրային ապահովման տեղադրում՝ **57,000,000 դրամ** արժողությամբ

2. Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի անվտանգության BIS համակարգի 2.4v ծրագրային ապահովման թարմացում 3.0 RU փաթեթով, որն ապահովում է ծրագրի ռուսերեն տարբերակ՝ **4,700,000 դրամ** արժողությամբ:
3. Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի անվտանգության BIS համակարգի ավտոմատ արխիվացման ծրագիր Marathon everRun FT՝ **12, 600,000 դրամ.**

- **Համակարգչային ծրագրերի գծով կապիտալ ներդրումները պլանավորվել են՝ 1,125,256.0 հազ ՀՀ դրամ, որից**
  - **ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման ձեռքբերման համար 93,438.0 հազ ՀՀ դրամ,**
  - **Կիրառական ծրագրային ապահովման համար 954,118.0 հազ ՀՀ դրամ:**
  - **Տեղեկատվական անվտանգության ծրագրային համակարգերի համար՝ 77,700.0 ՀՀ դրամ**

**Ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման մասով**

2015թ. նախատեսվում են ձեռք բերել ծրագրային փաթեթներ հետևյալ նպատակներով՝

- ԿԲ-ի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում օգտագործվող ծրագրային համակարգերի արտոնագրում
- տվյալների հենքի կառավարման համակարգի թարմացում, պահանջվող քանակի արտոնագրերի ապահովում և այդ համակարգի ադմինիստրավորման ծրագրային միջոցներ
- ծրագրատեխնիկական սպասարկման ուտիլիտներ
- ծրագրաապարատային ինֆրակառուցվածքի վիրտուալիզացիայի, կառավարման և մոնիտորինգի համակարգի ներդրում

- ծրագրավորման միջոցների և ստանդարտ ծրագրերի նոր տարբերակների ձեռքբերում,
- ցանցային ենթակառուցվածքի կառավարման և մոնիտորինգի համակարգ:

Ստորև բերված են ծրագրային փաթեթները՝

Ա ) Դիլիջանի ուսումնահետազոտական համալիրի համար՝

1. Microsoft ընկերության Shaire Point փաթեթը ինտերնետի կիրառությունների համար՝ մեկ սերվեր
3.500.000 դրամ

2. Microsoft ընկերության MS SQL փաթեթը ինտերնետի կիրառությունների համար՝ մեկ սերվեր
1.100.000 դրամ

3. Այլ ծրագրային փաթեթներ՝ Eviews, SPSS, AABBY Lingvo, DNA Help Desck և այլ
5.000.000 դրամ

Բ) Ամբողջ ԿԲ-ի համար

1. SS ենթակառուցվածքի ու տվյալների հենքերի կառավարման և մոնիտորինգի համակարգ
5.000.000 դրամ

2. VMWARE վիրտուալիզացիայի ծրագրային համակարգի Enterpise Plus արտոնագրեր նոր HP 3PAR բլեյդ սերվերային համալիրի սերվերների 12 պրոցեսորի համար
12 * 3500USD=42.000USD * 416 դրամ = 17.472.000 դրամ

3. VMWARE վիրտուալիզացիայի ծրագրային համակարգի Enterpise Plus արտոնագրեր գործող Standart արտոնագրերի Cisco և IBM բլեյդ սերվերային համալիրի սերվերների 36 պրոցեսորի համար
36 * 2500USD=90.000USD * 416 դրամ = 37.440.000 դրամ

4. Տվյալների հենքերի կառավարման համակարգի ադմինիստրավորման ծրագրային գործիքներ
1.600.000 դրամ

5. Ծրագրավորման համար անհրաժեշտ կոմպոնենտներ
3.000.000 դրամ

6. ORACLE տվյալների հենքի պաշտպանական համակարգ ORACLE DB Vault 200 օգտագործողի համար
200 * 96.630 = 19.326.000 դրամ

Ընդհանուր ծախսերը կկազմեն 93,438.0 հազ ՀՀ դրամ:

**Կիրառական ծրագրային ապահովման մասով**.

2015 թվականից սկսվում է մի քանի նախագծերի մշակում և ներդրում՝ Կանխիկի կառավարման տեղեկատվական համակարգ, Բանկային ավտոմատացված համակարգ, Անձնակազմի կառավարման համակարգ, Ֆինանսական վերահսկողության համակարգ, Վարկային ռեգիստր համակարգ, Դրամական փոխանցումների միասնական ազգային համակարգի (ARUS), Պայմանագրերի վարման համակարգ, Դրամական միջոցների ներգրավման սակարկություններով գործարքների ավտոմատացված համակարգ, Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում առքի/վաճառքի գործարքների կատարման ավտոմատացված համակարգ: Նախագծերի մեծ մասը շարունակվելու է 2015 թվականից հետո: Այդ նախագծերի իրականացման համար 2015թ. ընթացքում պատրաստի ծրագրային ապահովման ձեռքբերման, այլ կազմակերպություններին պատվիրակման և ՀՀ ԿԲ-ի ռեսուրսներով նախատեսվող ընդհանուր ծախսերը կկազմեն **954,118,000 դրամ**:

**Տեղեկատվական անվտանգության ծրագրային համակարգերի մասով. 77,700.0 հազ. ՀՀ դրամ**

1. ՀՀ ԿԲ օգտագործողների և կայանների քանակի ծածկույթը ապահովելու նպատակով անհրաժեշտ է լրացուցիչ ձեռք բերել հետեւյալ ծրագային ապահովման արտոնագրերը՝

   1. MFE Vulnerability Mngr EN SW 1YrGL՝ 500 արտոնագիր՝ 2,750,000 դրամ
   2. MFE Email Security 1Yr GL՝ 100 արտոնագիր՝ 300,000 դրամ
   3. MFE Web Security 1Yr GL՝ 100 արտոնագիր՝ 350,000 դրամ

Ընդամենը **3,400,000 դրամ**

1.Ցանց ներխուժման/հայտնաբերման/կանխարգելման համակարգի հետ անհրաժեշտ է ձեռք բերել Ցանցային ներխուժման հայտնաբերման/կանխարգելման համակարգի կառավարման և ցանցային հոսքի վերլուծության ծրագրային ապահովում **1,300,000 դրամ** արժողությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակներից ելնելով անհրաժեշտ է ձեռք բերել նաեւ

1. Թվային ինքնությունների կառավարման համակարգ՝ **7,500,000 դրամ**
2. Ֆայլային պահարանի անվտանգության համակարգ՝ ֆայլ սերվերի վրա պահպանվող տվյալների անվտանգության բարձրացման համար՝ **49,000,000 դրամ**

3. Անվտանգ ցանցային միացման սերվեր՝ VPN սերվեր՝ հեռավոր աշխատանքի համար, ինտերնետից ԿԲ ռեսուրսներին միացման անվտանգությունը ապահովելու համար: **4,000,000 դրամ**

4. Տվյալների շտեմարանում օգտագործողների գործողությունների հսկողության համակարգ՝ **12,500,000 դրամ**

Ընդհանուր ծախսերը կկազմեն **77,700,000 դրամ**:

***Գրասենյակային գույք, կապի միջոցներ, այլ հիմնական միջոցներ՝ 79,727.0 հազ. ՀՀ դրամ***

Կենտրոնական բանկի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ այլ հիմնական միջոցներ, մասնավորապես՝ կապի միջոցներ, պատճենահանող սարքեր, թուղթ ոչնչացնող սարքեր, տնտեսական գործիքներ և այլ հիմնական միջոցներ ձեռք բերելու համար 2015 թվականին նախատեսված է 79,727.0 հազ. ՀՀ դրամ:

*Գրասենյակային գույքի գծով ծախսերը 2014թ նկատմամբ նվազել են 72 % ով:*

***Անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ՝ 62,924.0 հազ. ՀՀ դրամ***

2015թ. անվտանգության ոլորտի կապիտալ ներդրումները հիմնականում պայմանավորված են կենտրոնական բանկի, պահուստային բանկի և տարածքային դրամարկղային կենտրոնների անվտանգության համակարգերի ընդարձակման, «Դիլիջան ուսումնահետազոտական կենտրոն», վարչական բնակելի շենքի պահպանության համար անվտանգության սարքավորումների ձեռքբերման և տեղադրման հետ:

Համակարգերի և սարքերի քանակները պլանավորվել են՝ հաշվի առնելով արդեն գործող ԿԲ անվտանգության ինտեգրացված համակարգի պահանջները, իսկ գները՝ հիմք ընդունելով ԿԲ-ին անվտանգության սարքավորումներ մատակարարող կազմակերպության հետ կնքված պայմանագրային գները և ներկայիս շուկայական

գները/ինտերնետային կայքերի միջինացված գներ/, հաշվի առնելով ներմուծման ճանապարհային ծախսերը և հարկերը:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ համար նախատեսված գումարից ավել է 68% ով:*

***Էմիսիոն և կանխիկ դրամով գործառնությունների ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ՝ 1,000.0 հազ. ՀՀ դրամ***

ՀՀ դրամանիշերի մանրադիտակային փորձաքննության համար անհրաժեշտ է ձեռք բերել Ստերեոմանրադիտակ, որը միացվելով համակարգչին հնարավորություն է տալիս դրամանիշերի միկրոհատկանիշները նկարել թվային խցիկով և փոխանցել համակարգիչ՝ արխիվացման հնարավորությունով:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ համար նախատեսված գումարից ավել է 850 հազար դրամով:*

## *3. Կապիտալ ներդրում այլ իրավաբանական անձանց կանոնադիր կապիտալում՝ 22,300,000.0 հազ. ՀՀ դրամ*

«Հայինկասացիա» ՓԲԸ կանոնադրական կապիտալում պլանավորվում է կատարել **300 մլն** ՀՀ դրամի կապիտալ ներդրում, որը ուղղվելու է «Հայինկասացիա» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինմանը:

«Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ կապիտալում պլանավորվում է կատարել **22 մլրդ** դրամի կապիտալ ներդրում: Համալրումները պայմանավորված են վերջիններիս զարգացման հնարավորությունների ավելացման անհրաժեշտությամբ:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ համար նախատեսված գումարի նկատմամբ նվազել է 6% ով:*

## *4. Վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումներ՝ 85,000.0 հազ. ՀՀ դրամ:*

Գումարը նախատեսվում է ԿԲ-ում 2004 թվականից շահագործվող 1 ավտոմեքենայի, 2006 թվականից շահագործվող 2 ավտոմեքենաների և 1999թ–ից շահագործվող 1 միկրոավտոբուսի փոխարինման համար:

*Այս հոդվածով նախատեսված գումարը 2014թ համար նախատեսված գումարի նկատմամբ աճել է 89 % ով:*

***Ընդամենը կապիտալ ներդրումների և հիմնական միջոցների ձեռքբերման ծրագիր՝ 26,326,882.0 ՀՀ դրամ:***